

«Պանդոկ Երևան». ազգային խոհանոցը նորովի

«Պանդոկ Երևան» ռեստորանային ցանցի բացման պահից ի վեր հիմնադիրները մեկ կարևոր նպատակ էին դրել իրենց առջև՝ ստեղծել ազգային խոհանոցը լավագույնս ներկայացնող ռեստորանային մի ցանց, որտեղ մատուցվող կերակրատեսակները կհիշեցնեն տնայինը՝ թարմ և որակյալ: Իր գործունեության գրեթե տասը տարիների ընթացքում «Պանդոկ Երևանը» բազմիցս փաստել է, որ արժանի է դեռևս 2009 թվականին «Երևանի լավագույն ռեստորան-2009» ազգային մրցանակաբաշխության ժամանակ «Լավագույն հայկական խոհանոց» կոչվելու պատվին: Սակայն «Պանդոկ Երևանն» այսքանով կանգ առնել, իհարկե, չի պատրաստվում:

«Ազգային խոհանոցը նորովի»՝ հենց այս կարգախոսով «Պանդոկ Երևան» ռեստորանային ցանցը շարունակում է անակնկալներ մատուցել հավատարիմ այցելուներին, նաև մայրաքաղաքի հյուրերին՝ առաջարկելով բոլորիս սիրելի և դարերի տևողությամբ ստուգված ու մեր օրերը հասած հայկական ավանդական կերակրատեսակներ, որոնք հանրակ մոռացված կամ մոռացման եզրին են գտնվում:

Օրերս Տերյան 91 հասցեում հաճախորդների առջև իր հյուրընկալ դռները կբացի թվով արդեն չորրորդ՝ յուրօրինակ ներքին հարդարմամբ աչքի ընկնող սրահներով ռեստորանը, որտեղ հենց հյուրերի աչքերի առջև տեղադրված թոնիներում կթխվի հայկական ավանդական լավաշն ու գաթան: Պահպանելով «Պանդոկ Երևանի» լավագույն ավանդույթները՝ չորրորդ ռեստորանը նախորդներից թերևս կտարբերվի թարմացված ճաշացանկով, որն իր մեջ ամփոփելու է հին հայկական ավանդական խոհանոցի լավագույն նմուշները՝ նորովի մատուցված, ընդարձակ և ինքնատիպ սրահներով, ինչպես նաև Հայաստանում առաջին անգամ իրականացվող առցանց ռեստորանի գաղափարի ներմուծմամբ:

Հարկ է նշել, որ առցանց ռեստորանի գաղափարը ոչ միայն ելնում է ժամանակակից աշխարհի տեխնոլոգիական նորամուծություններից հետ չմնալու ձգտումից, այլ նաև նպատակ ունի հեշտացնելու հաճախորդների գործը, որոնք շատ հաճախ պարզապես ժամանակ չեն ունենում ռեստորան այցելելու, նախօրոք պատվիրելու, կամ տեղյակ չեն ճաշացանկին: Այսօր արդեն «Պանդոկ Երևանի» պաշտոնական կայքում՝ www.pandokyerevan.com, կարելի է իրականացնել առցանց (օնլայն) պատվերներ՝ առանց համակարգչից հեռանալու: Սոցիալական կայքի սկզբունքով հնարավոր է ստեղծել սեփական էջն ու առցանց «զգել» վիրտուալ սեղանը՝ ստանալով նախահաշվարկն ու պատվերի լիարժեք պատկերը մատուցվելիք ուտեստների նկարների տեսքով:

Հայաստանի տարբեր գյուղերից ներմուծված էկոլոգիապես մաքուր սննդամթերք, գնի, որակի և սպասարկման հիանալի համադրությամբ ստեղծված մի միջավայր, ավանդական հայկական և կովկասյան խոհանոցի լավագույն նմուշներ, անկաշկանդ ու գեղեցիկ մթնոլորտ, հայկական ազգային երաժշտություն՝ այս հասկացությունները սկզբունքային են «Պանդոկ Երևան» ռեստորանային ցանցի հիմնադիրների համար, և վաղուց կազմում են անձնակազմի առօրյա աշխատանքային գործունեության առանցքային մասը:

Հնի և նորի խաչմերուկներում տեղավորված մեր քաղաքում հնարավոր չէր անգամ պատկերացնել ավելի լավ մի վայր, քան «Պանդոկ Երևանն» է, որը մեծապես տարված է հայկական ավանդական խոհարարական արվեստում նորը ստեղծելու գաղափարով, սակայն հինը պահպանելու և գալիք սերունդներին լավագույնս ներկայացնելու պայմանով:

Այսպիսով, «Պանդոկ Երևանը» սպասում է ձեզ իր հին ու նոր (այդ թվում և վիրտուալ) հասցեներում:

📍 Լենա Քևորգյան / գովապրային



ՊԱՆԴՈԿ ԵՐԵՎԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԽՈՎԱՆՈՑԸ

ՆՈՐՈՎԻ



www.PandokYerevan.com
www.facebook.com/PandokYerevan

առաջին օնլայն ռեստորանը Հայաստանում

Տերյան 91	Ամիրջան 5	Պարոնյան 7	Խորենացի 29/2
Ֆեռ.՝ (010) 508 800	Ֆեռ.՝ (010) 545 545	Ֆեռ.՝ (010) 530 563	Ֆեռ.՝ (010) 582 512
Բջջ.՝ (096) 508 800	Բջջ.՝ (099) 545 545	Բջջ.՝ (091) 530 563	Բջջ.՝ (099) 550 566